

ՆԱԽԱԳԱՀ ԱՍՏՏ ՀԱԼԷՊ ԺԱՄԱՆԵՅՆ ՈՒ ԲԱՅՈՒՄԸ ԿԱՏԱՐԵՅՑ ԿԵՐԱՆՈՐԴՈՒԹՅԱՆ ԵԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻՆ

Ուրբաթ, 8 Յուլիս 2022-ին, Սուրիոյ Նախագահութեան պաշտօնական կայքը հաղորդեց, որ 6 տարի առաջ սուրիական բանակը ազատագրեց Զա-



լէպ Նահանգի արեւելեան արուարձանի ելեկտրածին կայանը, իսկ այսօր երկրաչափերն ու բարեկարգման խմբակները աւարտեցին տրոգութեան
 Շար.՝ էջ 2 >

ԱՏՅԱ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ՆԱԽԱԳԱՀ ԱՍՏՏ ԱՂՈՐԹԵՅՑ ՀԱԼԷՊԻ ՄԵԿԻԹՆԵՐԷՆ ՄԵԿՈՒՆ ՄԵՅ

Շաբաթ, 9 Յուլիս 2022-ի առաւօտուն, Սուրիոյ Նախագահ Պաշար ալ-Ասատ իսլամական Ատիա տօնին առիթով աղօթեց Զալէպի ալ-Սահապի ալ-ճալիլ պըն ապտալլա պըն Ապպաս մզկիթէն ներս, հոծ բազմութեան ներկայութեան:



Աղօթքէն ետք, Նախագահը ողջունեցին հարիւրաւոր հալէպցիներ, որոնք հաւաքուած էին մզկիթի սեմին: Անոնք զօրակցական արտայայտութիւններով գնահատեցին Նախագահին Զալէպ այցելութիւնն ու Զալէպի բնակչութեան կենցաղային ու տնտեսական հարցերուն բարւոյ լուծման նպաստելը:

ԱՍՏՏ ԱԼ-ԱՍՏՏ. «ՀԱԼԷՊ ՄՈՒՏԻՐՆԵՐԷՆ ԿԸ ՅԱՌՆԻ»

Շաբաթ, 9 Յուլիս 2022-ին, Սուրիոյ Նախագահութեան պաշտօնական կայքը հաղորդեց, որ Սուրիոյ Առաջին Տիկին Ամա ալ-Ասատ մասնակցեցաւ Զալէպի Նահանգապետարանին կազմակերպած շուկաներու զարգացման յատուկ ձեռնարկին, որ տեղի ունեցաւ «Սէֆ ալ-Տաուլէ» դպրոցէն ներս:



Այս առիթով Առաջին Տիկինը Զալէպին ու անոր ժողովուրդին հանդէպ իր սերը արտայայտելով ըսաւ. «Զալէպ կայուն է, դիմացկուն եւ պայքարող: Զալէպ իր պատմութեան նման ճշմարիտ է, քարտէրուն նման ամրակուռ եւ արուեստին

նման վեհ: Զալէպ իւրաքանչիւր հարցի եւ տագնապի լուծում ունի, ան երբեք չի յանձնուիր պարագաներու, այլ կը թօթափէ պատերազմի փողին եւ փիւնիկի նման մոխիրներէն կը յառնի, կ'ապրի արտադրելով ու կը շնչէ արուեստով, բնաստեղծութեամբ եւ մշակոյթով: Զալէպի յաղթանակը զօրութեան ապացոյց է: Սուրիոյ ժողովուրդին զօրութիւնը պատերազմին դէմ յաղթանակի ապացոյցն է, իսկ Զին Զալէպի վերականգնումը ոչ միայն Զալէպի ժողովուրդը կը հետաքրքրէ, այլեւ իւրաքանչիւր սուրիացի եւ Սուրիոյ հանդէպ սէր, հետաքրքրութիւն ունեցող իւրաքանչիւր անհատ»:



ԱԶԳ. ԶԱՐԷՆ ԵՓՓԷ ՃԵՄԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՅԱՉՈՂՈՒԹԵԱՆ ՊԱՅՏԱՌ ԷՅ ՄԸ ԱԿԵԼՆԱԻ

Ազգ. Զարէն Եփփէ ճեմարանը 75 տարեկան է: Իր հիմնադիրներու տեսլականով երկար ճամբայ կտրած, սերունդներ կերտած ու հայեցի կըրթութիւն եւ գիտութիւն ջամբած այս հաստատութիւնը կրթօճախ մը չէրաւ սոսկ: Ան եղաւ հայակերտումի դարբնոց մը, նորահաս սերունդներու հոգեմտաւոր աշխարհը հարստացուց իր կրթական մշակներուն եւ վարչական պատասխանատուներուն հետեւողական աշխատանքին ու գուրգուրանքին, իր մթնոլորտին շնորհիւ:

75-ամեակի շրջանաւարտ սերունդը լուսաւոր էջ մը եւս աւելցուց ճեմարանի ոսկեմատենին մէջ, երկրի դժուարին պայմաններուն մէջ պաքալորիայի պետական քննութիւններուն բացառիկ արդիւնք արձանագրե-



լով ու Զալէպ Նահանգի մակարդակով բարձրագոյն գնահատանիչեր ապահովող տասնեակին մէջ երկու աշակերտներով իր ներկայութիւնը ամրագրելով:

Արդարեւ, հովանաւորութեամբ Բերիոյ Զայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Ս. Եպս. Չօպուեանի, Կիրակի, 10 Յուլիս 2022-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Ազգ. Զարէն Եփփէ ճեմարանի շրջափակէն ներս տեղի ունեցաւ 2021-2022 ուսումնական տարեշրջանի երկրորդականի աւարտական հանդէպ:


Զանդիսութեան ներկայ էին Բերիոյ Զայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգ. Կեդր. Վարչութեան անդամ Զրաչ Յակոբեան, ԶՄԸՄ-ի Կեդր. Վարչութեան ներկայացուցիչ Մանուկ Զեօշկերեան, Պատկան Մարմնի ներկայացուցիչներ, Սուրիոյ Խորհրդարանի անդամ Ժիրայր Րէիսեան, Բերիոյ Թեմի Ազգ. Վարչութեան, ինչպէս նաեւ բարեսիրական, մշակութային եւ մարզական միութիւններու ներկայացուցիչներ, ճեմարանի խնամակալութիւնը, տնօրէնութիւնը, ուսուցչական կազմը, Շրջ. Միութեան անդամներ ու ծնողներ:

Զանդէն բաց յայտարարուեցաւ ու ներկաները մէկ վայրկեան յոտընկայս լռութեամբ յարգեցին Նահատակներուն յիշատակը: Աշակերտական երգչախումբը մեկնաբանեց Սուրիոյ եւ Զայաստանի Զանրապետութեան գոյգ քայլերգները, դաշնամուրի ընկերակցութեամբ Սելա Պագարպաշ-

ժիրայր Կարապետեան
 Շար.՝ էջ 12 >

ՓԱՇԻՆԵԱՆ ԸՆԴՊԻՆԱԾ Է ՀՀ ՍՈՒՐԻՈՅ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՒ ԼԻԱԶՅՈՐ ԴԵՄՊԱՆԸ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան ընդունած է Զայաստանի Զանրապետութեան մէջ Սուրիոյ Արաբական Զանրապետութեան Նորանշանակ արտակարգ եւ լիազօր դեսպան Նորա Արիսեանը:



Վարչապետը շնորհաւորած է դեսպան Արիսեանը դիւանագիտական առաքելութեան մեկնարկին առիթով եւ մաղթած արդիւնաւետ գործունեութիւն՝ ի նպաստ երկու երկիրներու յարաբերութիւններու զարգացման:

«Զայաստան կարեւոր կը համարէ Սուրիոյ հետ համագործակցութիւնն ու պատմական կապերը: Մենք կը հետեւինք զարգացումներուն եւ կը մաղթենք, որ բարեկամ Սուրիան օր առաջ յաղթահարէ ճգնաժամը», յայտնած է Նիկոլ Փաշինեան: Վարչապետը անդրադարձած է ՀՀ կողմէ 2019-ին Սուրիա դրկուած մարդասիրական առաքե-

Շար.՝ էջ 3 >

Խմբագրական

ՍՈՒՐԻՈՅ ՆԱԽԱԳԱՏԻՆ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ ՈՒՂԵՐՉՆԵՐԸ

«Չալեպը Սուրիոյ դէմ ծաւալած ահաբեկչական պատերազմի տարիներուն ամենէն շատ տուժած նահանգն էր, որովհետեւ ահաբեկիչներուն նպատակը թէ՛ Սուրիոյ տնտեսական մայրաքաղաքի՝ Չալեպի, արժէքը նսեմացնել, թէ՛ նահանգի մշակոյթն ու քաղաքակրթութիւնը նենգափոխել, եւ թէ Չալեպի բնակչութեան դիմագիծը քայքայել էր»:

Սուրիոյ նախագահին Չալեպ այցելութեան առիթով արտասանած այս խօսքերը լոկ մարդասիրական ապրումներէ բխած արտայայտութիւններ չէին, այլ քօղազերծումն էին բոլոր այն ծրագիրներուն, որոնք դաւադրաբար ի գործ կը դրուէին Թուրքիոյ եւ արեւմտեան երկիրներու կողմէ հովանաւորուած ահաբեկչական խմբաւորումներու ձեռնամբ եւ յաջողելու պարագային Չալեպն ու իր արուարձանները ենթակայ կրնային դարձնել Թուրքիոյ ուղղակի ազդեցութեան:

Ահա թէ ինչո՞ւ, պատերազմի տարիներուն, դաւադրական այդ ծրագիրին իբրեւ արդիւնք քանդուեցան Յին Չալեպի պատմական վայրերը, Չալեպի արեւելեան արուարձանի ելեկտրակայանը: Նոյն նպատակով քանդուեցան ու թալանուեցան Չալեպի գործարանները մէկը միւսին ետեւէն, ապա նաեւ ճարտարարուեստի տարբեր կեդրոնները՝ Շէյխ Նաճճարէն մինչեւ Ռամուսէ եւ այլուր, հրթիռակոծուեցաւ Չալեպի Օմայյատ մրգկիթն ու անոր խորհրդանիշներէն մէկը Թուրքիա փոխադրուեցաւ: Զրթիռակոծուեցան Չալեպի հայկական թաղամասերը, յատկապէս՝ Նոր Գիւղը: Շարքը երկար է պատերազմի տարիներուն Չալեպի մէջ այս ծրագիրին իրականացման համար ի գործ դրուած անմարդկային արարքներուն:

Սուրիոյ նախագահը Սուրիոյ պատերազմէն ու Չալեպի ազատագրումէն վերջ առաջին անգամ ըլլալով Չալեպ այցելելով նախ յայտարարեց դաւադրական այս ծրագիրին ձախողումը, հաստատելով որ Չալեպ նահանգը, իր բոլոր արուարձաններով, կը մնայ Սուրիոյ կարելորագոյն նահանգներէն մէկը:

Չալեպի արեւելեան արուարձանի ելեկտրակայանին վերաբացումով, նախագահը Չալեպի բնակչութեան ուղերձ յղեց՝ հաստատելով, որ ելեկտրակայանութեան բարելաւումով Չալեպի տնտեսական դերը Սուրիոյ ընդհանուր տնտեսութեան մէջ աստիճանաբար պիտի վերականգնի:

Երկրի տարածքային ամբողջականութեան շեշտադրումը եւս կը ինչէր նախագահին ուղերձին մէջ, յատկապէս վերջին շրջանին Սուրիոյ հիւսիսային արուարձաններու մէջ զինուորական գործողութիւններ սկսելու Թուրքիոյ նկրտումներուն որպէս պատասխան: Նախագահը իր ուղերձով կը հաստատեր, որ Չալեպը կարմիր գիծ է, իսկ Սուրիան անվարանօրէն դէմ պիտի դնէ երկրի տարածքներ ներխուժող օտար ուժերուն: Թուրքիոյ այս նկրտումները օրին դատապարտուեցան նաեւ Սուրիոյ դաշնակիցներու կողմէ:

Այս այցելութեամբ նախագահը արտաքին աշխարհին կը յայտնէր նաեւ, որ Սուրիան ինքնիշխան երկիր է եւ որեւէ մարդասիրական օժանդակութիւն կարելի է առաքել միայն Սուրիոյ օրինական իշխանութիւններուն ճամբով՝ յարգելով Սուրիոյ ինքնիշխանութիւնն ու տարածքային ամբողջականութիւնը:

Սուրիոյ նախագահը ընտանեօք Չալեպ այցելելով եւ ժողովուրդի հոծ բազմութեան հետ ուղղակի հանդիպելով եկաւ հաստատելու Սուրիոյ աշխարհագրութեան ու բնակչութեան տիրութիւն ընելու իր վճռակամութիւնը՝ ի հեճուկս երկրի կայունութեան քայքայման ձգտող արտաքին բոլոր ուժերուն:

«Գ.»

-Երեքշաբթի, ՄԱԿ-ի Ապահովեան խորհուրդը ընդունեց 2585 բանաձեւի գործնականացման վեց ամիսով երկարաձգումը: Բանաձեւը կ'առաջարկէ Սուրիա մուծուող մարդասիրական օգնութիւնները Պապ ալ-Յաուա միջանցքով շարունակել եւ վերականգնումի ծրագիրները լրումին հասցնել, այս իմաստով նաեւ խորհուրդին կողմէ համապատասխան որոշում գոյացնել: Բանաձեւի վերականգնումի բաժինին մէջ առաջին անգամ ըլլալով արձանագրուեցաւ ելեկտրակայանութեան հարցը՝ սուրիական պատուիրակութեան առաջարկով, որպէս կարելոր գործօն առողջապահական, ուսումնակրթական եւ այլ ոլորտներու վերականգնումի:



ՄԱԿ-ի մօտ Սուրիոյ մշտական ներկայացուցիչ, դեսպան Պասսամ Սապպաղ բանաձեւի նախագիծին քուէարկութենէն ետք ըսաւ, որ Սուրիա բազմիցս հաստատած է, որ իր ժողովուրդին առնչուող բոլոր հարցերը պետութեան առաջնային մտահոգութիւնները կը հանդիսանան: Ան յայտնեց, որ Սուրիա նախանձախնդիր եղած է մարդասիրական օգնութիւնները հասցնելու երկրի բոլոր մասերու քաղաքացիներուն՝ առանց խտրութեան, եւ այս իմաստով ամենադժուար ժամանակներու մէջ անգամ յաջողած է ՄԱԿ-ի, Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտէի եւ մարդասիրական մարդի գործընկերներու բազմաթիւ շարասիւնները հասցնել երկրի տարբեր շրջաններ: Ան շեշտեց, որ Սուրիա պատրաստակամ է լրջօրէն գործակցելու բոլոր կողմերուն հետ, ապա հարկ համարեց դատապարտել Սուրիոյ շրջափակման բոլոր դրսեւորումները, որոնք հիմնական պատճառը կը հանդիսանան կենցաղային եւ առողջապահական բազում դժուարութիւններու:

-Ռուսիոյ Արտաքին Գործոց Նախարարութեան պաշտօնական ներկայացուցիչ Մարիա Զախարովա յայտնած է, որ Ռուսիա կը պաշտպանէ քիւրտերու եւ Դամասկոսի միջեւ երկխօսութիւնը Սուրիոյ ապագային շուրջ: «Չարիւրամեակներ շարունակ Սուրիան եղած է երկիր մը, ուր տարբեր ազգային եւ կրօնական խումբեր խաղաղ գոյակցութիւն վայելած են եւ ապահով պայմաններու մէջ՝ ապրած: Այս, հաւանաբար, Սուրիոյ իւրայատկութիւնն է, որ յարգելի է բոլորիս կողմէ: Մենք համոզուած ենք, որ նման պատմական ասանդոյթներ պետք է ամբողջութեամբ պահպանուին եւ շարունակուին: Մենք կը խօսինք այն մեկնակետէն ելլելով, որ սուրիացի քիւրտերը Սուրիոյ ժողովուրդին անբաժանելի մասն են: Մեկնելով այս սկզբունքային դիրքէն՝ Մոսկուան կ'աջակցի այն երկխօսութեան, որ կը շարունակուի քիւրտերու եւ Դամասկոսի միջեւ՝ իրենց ընդհանուր հայրենիքի հետագայ զարգացման շուրջ», ըսած է Զախարովա:



ՆԱԽԱԳԱՅ ԱՍՍՏ...

Սկիզբ՝ էջ 1

աշխատանքները: Սոյն թուականին, Սուրիոյ նախագահ Պաշար ալ-Ասատ այցելեց ելեկտրակայան, որպէսզի բացումը կատարէ կայանի վերանորոգուած 5-րդ ելեկտրաձին բաժնիին, որ 200 մեկա ուաթ տարողութեամբ ելեկտրականութիւն պիտի հայթայթէ Չալեպ նահանգին:

Նախագահ Ասատ շեշտեց, որ Չալեպի ժողովուրդը շատ տառապեցաւ ու զրկանքներ կրեց, ուստի իր իրաւունքն է առաւելագոյն չափով օգտուիլ այս կայանէն: Ապա անցուց. «Սուրիացի բանուորները, երկրաչափներն ու արհեստաւորները ճակատի վրայ մարտնչող զինուորներուն համարժէք պայքարողներ են: Բանակը կրուեցաւ, ազատագրեց հողը, ետ մղեց թշնամին, իսկ դուք երկիրը վերականգնելու համար օրն ի բուն աշխատեցաք, նոյնիսկ անապահով պայմաններու մէջ, ահաբեկչական խմբաւորումներէն ոչ շատ հեռու գտնուող վայրերու մէջ, նորոգեցիք ահաբեկչներուն քանդածը, վերակառուցեցիք ու վերաշինեցիք երկիրը: Ելեկտրակայանին վերանորոգուիլը կը վկայէ սուրիացիներուն կամքին եւ պայքարին մասին՝ մեր երկրին սպառնացող դաւադրական բոլոր ծրագիրներուն դիմաց»:

Նախագահը շրջեցաւ կայանին մէջ եւ ականատեսը եղաւ կայանի մնացեալ չորս բաժնիներու վերանորոգման աշխատանքներուն եւս:

Նախագահ Ասատին կ'ընկերակցէին Սուրիոյ վարչապետ Յուսէյն Արուս, Սուրիոյ ելեկտրակայանութեան նախարար Դասսան Զամել եւ Չալեպի նահանգապետ Յուսէյն Տիապ:

Լուրեր Հայաշխարհին

ՀՅԳ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԻՇԽԱՆ ՍԱՂԱԹԵԼԵԱՆԻ ՄԱՍԼՈՅ ԱՍՈՒԽՆԸ

11 Յուլիսին ՀՅԳ «Սիմոն Վրացեան» կեդրոնին մէջ տեղի ունեցաւ ՀՅԳ Հայաստանի ԳՄ ներկայացուցիչ իշխան Սաղաթելեանի մամլոյ ասուլիսը:

Ասուլիսի ընթացքին իշխան Սաղաթելեան ամփոփեց Եւրոպական խորհրդարան այցելութեան արդիւնքները, անդրադարձաւ շարք մը հանդիպումներուն ձեռք բերուած համաձայնութիւններուն, խօսեցաւ ներքաղաքական գարգացումներուն եւ յառաջիկայ ընելիքներուն մասին, ինչպէս նաեւ պատասխանեց լրագրողներու հարցումներուն:



«Միջազգային կառույցներուն մէջ, յատկապէս՝ Եւրոպական խորհրդարանի, Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի շահերը պատշաճ ներկայացուած չեն, եւ մեր հանդիպումներու ընթացքին ակնյայտ դարձաւ, որ Հայաստանի խորհրդարանական դիւանագիտութիւնը, ինչպէս նաեւ ԱԳՆ-ն պատշաճ կերպով չեն պաշտպանած հայ ժողովուրդին շահերը», յայտարարեց իշխան Սաղաթելեան՝ ներկայացնելով Եւրոպական խորհրդարանի մէջ իր հանդիպումներու հետեւանքով տեղի ունեցած արձանագրումներէն առաջինը:

Անոր երկրորդ արձանագրումը եղաւ այն, որ ՀՅԳ իշխանութիւններու պնդումները, թէ կայ միջազգային պահանջ ու համաձայնութիւն Արցախի կարգավիճակի հարցին նշանակող իջեցնելու առնչութեամբ, անհիմն են, նման պահանջ գոյութիւն չունի:

«Այլ հարց է, որ գոյութիւն ունի խաղաղութեան հասնելու պահանջ, խաղաղութեան օրակարգ, բայց երբ այդ հանդիպումներու ընթացքին մանրամասնօրէն բացատրեցինք, որ հայ ժողովուրդը դէմ է խաղաղութեան, սակայն այդ խաղաղութիւնը չի կրնար ըլլալ մեր հայրենազրկման գնով, եւ պարտադրուած խաղաղութիւնը տարածաշրջանին չի կրնար բերել կայունութիւն, անոնք մեր հիմնաւորումները հասկնալի համարեցին», ըսաւ Սաղաթելեան:

Ըստ երրորդ արձանագրումին. «Հայաստանի ընդդիմութիւնը կը պայքարի քանի մը ճակատներով: Այսպէս՝ թուրք-ատրպէյճանական պատուիրակութիւնները աշխարհի տարբեր մայրաքաղաքներուն մէջ Հայաստանի ընդդիմութիւնը կը փորձեն ներկայացնել իրենց ցեղապաշտական, տարածաշրջանը ապակայունացնող, պատերազմ հրահրող ուժեր, եւ անոնք այս թեգերը նաեւ աջակցութիւն կ'ունենան Հայաստանի իշխանութիւններու կողմէն: Զեռուաբար, ընդդիմութեան բոլոր պնդումներն ու յայտարարութիւնները այն մասին, որ ՀՅԳ իշխանութիւնները չեն սպասարկեր մեր ժողովուրդին շահերուն, կը գործակցին Թուրքիոյ եւ Ատրպէյճանի հետ, նոյն թեգերը յառաջ կը տանին միջազգային կառույցներուն մէջ, շատ ակնյայտ էին հանդիպումներու ընթացքին:

«Զորքորդ՝ աշխարհաքաղաքական այս բարդ իրավիճակին եւ վերադասաւորումներու փուլին, որ Հայաստանի համար յղի է նոր սպառնալիքներով, ՀՅԳ իշխանութիւնները վարած են պարտուողական, ոչ համարժէք քաղաքականութիւն», յայտնեց Սաղաթելեան եւ շեշտելով, որ Ատրպէյճան դարձած է հետաքրքրական Եւրոպայի համար՝ քարիւղի ու կազի շնորհիւ, ու այս իրավիճակին մէջ բռնապետական Ատրպէյճանը աւելի հետաքրքրական է Եւրոպային, քան ժողովրդավարական Հայաստանը:

«Հինգերորդ արձանագրումին համաձայն, Հայաստանի մէջ միջազգային կազմակերպութիւնները ներքաղաքական կեանքի մասին գեղուցումները կը ներկայացնեն միակողմանի, եւ այս հանդիպումները շատ կարեւոր էին, որպէսզի ներկայացուի Հայաստանի մէջ տիրող իրական վիճակը՝ քաղաքական բանտարկեալներ, սպորտիստութիւններ եւ այլն», աւելցուց ան:

Խօսելով Դիմադրութեան շարժումին մասին ան ըսաւ, որ գրեթէ բոլոր մարզերուն մէջ արդէն ձեւաւորուած են «Դիմադրութիւն» շարժումին խորհուրդները: Այդ, հիմա հանրահաւաքները տեղի կ'ունենան շաբաթը մէկ անգամ, սակայն մնացած օրերը լիարժէք աշխատանքային օրեր են:

«Շարժումի ընթացքին բոլոր բացթողումները, հարցերը եւ կազմակերպական դժուարութիւնները գնահատուած են: Այդ թերութիւնները վերացնելու եւ շարժումը աւելի ընդլայնելու ուղղութեամբ յըստակ աշխատանք կը տարուի», ըսաւ Սաղաթելեան՝ աւելցնելով, որ Հայաստանի տարբեր մարզերու մէջ կը ձեւաւորուին շարժման խորհուրդներ, որպէսզի շարժումը ամբողջ ծաւալով տեղափոխուի մարզեր:

ՎԱՐՉԱՊԵՏ ՓԱՇԻՆԵԱՆ ՇԵՆԱԳԱՅՆԱՅԻՆ ԶՐՈՅՑ ՈՒՆԵՃԱՄ Է ԹՈՒՐԷՈՅ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՇԵՏ

11 Յուլիսին ՀՅԳ վարչապետ Փաշինեան հեռաձայնային գրոյց ունեցած է Թուրքիոյ նախագահ Էրտողանի հետ: Հայաստանի վարչապետը շնորհաւորած է Թուրքիոյ նախագահը Ատհա տօնին առիթով, իսկ Թուրքիոյ նախագահը շնորհաւորած է Հայաստանի վարչապետը գալիք Վարդավառի՝ Յիսուս Զրիստոսի Պայծառակերպութեան տօնին առիթով: Դեկլարները ընդգծած են կարելուորութիւնը իրենց երկիրներու միջեւ յարաբերութիւններու կարգաւորման երկկողմ գործընթացին, որ պիտի նպաստէ նաեւ տարածաշրջանի մէջ խաղաղութեան եւ կայունութեան ամրապնդման:



Անոնք ակնկալած են, որ 1 Յուլիսին իրենց երկիրներու յատուկ ներկայացուցիչներու հանդիպումի ընթացքին գոյացած համաձայնութիւնները շուտով կեանքի կոչուին:

ՀՅԳ ՎՄ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՍԱՂԱԹԵԼԵԱՆ ԱՅՅԵԼԵՑ ԵՐՈՒՆՈՐԶՐԱՐԱՆ

Աշխատանքային այցելութեամբ Սթրազպուրկ գտնուող ՀՅԳ Հայաստանի Գերագոյն Մարմինի ներկայացուցիչ իշխան Սաղաթելեան շարք մը հանդիպումներ ունեցաւ Եւրոպական խորհրդարանին մէջ:

Հանդիպումներ տեղի ունեցան Եւրոպական խորհրդարանի պատգամաւորներու, ՀՀ-ԵՄ խորհրդարանական գործակցութեան յանձնաժողովի անդամ Փիթըր Վիտանովի, Եւրոպական խորհրդարանի Հայաստանի հետ բարեկամութեան խումբի նախագահ Լուքսա Ֆուրլասի եւ խորհրդարանի ECR քաղաքական խումբի փոխնախագահ Զառլի Վայմերի հետ: Աշխատանքային օրուան աւարտին իշխան Սաղաթելեան հանդիպում ունեցաւ նաեւ Եւրոպական խորհրդարանի փոխնախագահ Զեյնտի Զուլթայի հետ:



Հանդիպումներուն ընթացքին առանձնայատուկ քննարկումի նիւթ դարձան Հայաստանի ու Արցախի շուրջ առկա ապահովական մարտահրաւերները եւ ատրպէյճանական շարունակական իրաւունքի յարձակումը: Իշխան Սաղաթելեան կարեւոր համարեց Արցախի ինքնորոշման իրաւունքի լիարժէք իւրացման եւ կարգավիճակի հարցը, որպէս Արցախի ժողովուրդի իրաւունքներու պաշտպանութեան եւ հակամարտութեան կարգաւորման միջոց: Ծեշտուեցաւ այն միտքը, որ հայ ժողովուրդի համար անընդունելի է որեւէ լուծում, որով Արցախը պիտի ըլլայ Ատրպէյճանի կազմին մէջ:

Եւրոպացի գործընկերներուն ներկայացուցեցան նաեւ «Դիմադրութեան» շարժումին նպատակներն ու յառաջիկայ ծրագիրները, քննարկուեցաւ Հայաստանի ներքաղաքական իրավիճակը: 6 Յուլիսին, Սաղաթելեան հանդիպումներ ունեցաւ՝

- Եւրոպական խորհրդարանի փոխնախագահ Էւա Զալիլի,
- Արցախի հետ Եւ բարեկամութեան խումբի համահիմնադիր Փեթեր Վան Տալեի,
- Հայաստանի հարցով Եւ գեղուցող Անտրէյ Զովաչեւի,
- Եւ նախկին փոխնախագահ Ֆապիո Մասիմօ Զասթալտոյի,
- Յունաստանի Սոցիալ-Դեմոկրատ Կուսակցութեան նախագահ, Եւ պաշտպանութեան եւ անվտանգութեան յանձնաժողովի փոխնախագահ Նիկոս Անտրուլաքիսի հետ:

Հանդիպումներու ընթացքին քննարկուեցան Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման հեռանկարները, ներկայացուեցաւ «Դիմադրութիւն» շարժումի մօտեցումները:

Բոլոր հանդիպումներու ընթացքին Սաղաթելեանի կողմէ արծարծուեցաւ նաեւ Ատրպէյճանի մէջ պահուող հայ ռազմագերիներուն հարցը:

ՓԱՇԻՆԵԱՆ ԸՆԴՈՒՆԱՄ Է...

Սկիզբ՝ Էջ 1

լութեան, որ ծաւալած է մարդասիրական ականագործման, բնակչութեան հակաականային իրազեկման, բժշկական ծառայութիւններու մատուցման գործունեութիւն:

Դեսպան Նորա Արիսեան շնորհակալութիւն յայտնած է շեքմ խօսքերուն համար եւ ընդգծած, որ իրեն համար՝ նաեւ որպէս սուրիահայր պատիւ է Հայաստանի մէջ դիւանագիտական ծառայութիւնը: Ան Սուրիոյ իշխանութիւններուն անուսով երախտագիտութիւն յայտնած է ՀՅԳ իշխանութիւններուն՝ երկրին ցուցաբերուող մարդասիրական աջակցութեան համար եւ յայտնած, որ կարելի ի գործ պիտի դնէ փոխյարաբերութիւններու յաւելեալ սերտացումին համար:

Զրուցակիցները կարեւոր համարած են սուրիահայ համայնքին դերը հայ-սուրիական կապերու ամրապնդման մէջ: Մտքեր փոխանակուած են համագործակցութեան օրակարգի եւ հեռանկարներու շուրջ:

ՄԵՐ ՀԱԿԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ՀՋՕՐ, ԱՆԽՆԱՅ, ԱՆՅԱՊԱՂ, ՏԵՂԱՇԱՐԺԱՅԻՆ

Կարո Արմենյան

Ներկայիս տարածաշրջանի ուժերու դասաւորման մէջ, հայկական կողմը կը գտնուի իր ամենէն անգէն, անօգնական եւ սնանկ դրութեան մէջ: Մեր աչքերուն առջեւ բացուող հանրագումարը (bottom line) ողբալի է եւ վիրաւորական: Մենք պարզապէս դադրած ենք գործօն դերակատար ըլլալէ մեր իսկ ազգային պաշտպանական քաղաքականութեան դիրքերէն:

Պատկերը հետեւեալն է:

(ա) Արեւմուտքը, որուն վրայ իր գրաւը դրած է Փաշինեանի պարտութեան վարչակարգը, վստահելի նեցուկ չի կրնար ըլլալ Հայաստանի եւ Արցախի համար եւ չէ: Այն ՀՀ իշխանութիւնը, որ այսօր կ'ապաւինի Արեւմուտքին, սնանկ է եւ պարտուած՝ դեռ այս բարդ ճանապարհի մեկնարկին: Հայաստանն ու Արցախը պարզապէս գոյութիւն չունին Արեւմուտքի շահերու աղիւսակին մէջ:

(բ) Ռուսիան, -Ուքրանիոյ պատերազմով,- իր դիրքերն է, որ կ'ամրապնդէ Արեւմուտքի եւ Թուրքիոյ դէմ: Իր առաջնահերթութիւններն են՝ (1) սեպ խրել ԱՄՆ-ի եւ Եւրոպայի շահերուն միջեւ եւ ներսէն տկարացնել ՆԱԹՕ-ն: (2) Իր հակակշռին տակ առնել փակթուրքի մի բոյները ՌԴ-ի եւ Կեդրոնական Ասիոյ մէջ: (3) Սեւ Ծովը ազատել Թուրքիոյ մենատիրութենէն:

(գ) Կովկասի կնճիռը շատ անելի բարդ կը թուի ըլլալ: Ալիեւ կրցաւ կաշառել Մոսկուայի establishment-ը եւ Մոսկուայէն «գնել» իր յաղթանակը Հայաստանի դէմ... Կը թուի, թէ Մոսկուա իր կրաւորական խաղով «գոհեց» Ռուսիոյ հեռահաս շահերը Կովկասի մէջ: Իրականութեան մէջ, ան, իր կարգին, առաւելութիւններ ապահովեց ինքզինքին համար Հայաստանի հաշուոյն: Ան այսօր կախեալի դիրքերուն մէջ կը պահէ Ալիեւը այն յոյսով, որ Մոսկուա ի վերջոյ կը յաջողի Ատրպէյճանը հեռացնել Թուրքիայէն... Այս խաղը դեռ ընթացքի մէջ է: Ծուշիի պայմանագիրը ցոյց կու տայ, որ դժուար եւ կոտորակուած խաղ է ըլլալու այս մէկը: Բայց ի վերջոյ Մոսկուա լուրջ առիթներ ունի այս մարզին մէջ: Մոսկուա կարողութիւնը ունի այս խաղատախտակը իր հակակշռին տակ պահելու:



(դ) Ողբերգութիւնը այն է, որ այսօրուան Մոսկուան շատ քիչ արժէք կը կապէ Հայաստանին: Ի տարբերութիւն Ատրպէյճանի՝ առայժմ Հայաստան զուրկ է լծակներէ Մոսկուայի մէջ «խաղաղոց» դիրքերէ գործել կարենալու համար: Այդ իսկ պատճառով, Մոսկուայի եւ Արեւմուտքի շահերը կը համընկնին Փաշինեանի կապակցութեամբ: Երկուքն ալ կ'ուզեն Փաշինեանը... Երկուքն ալ կարելի կը համարեն Փաշինեանի կերպընկալ վարքագիծը իւրաքանչիւրը իր շահերէն ելլելով: Իւրաքանչիւրը ԻՐ ՈՒՐՈՅՆ ՅՈՅՍՆԵՐԸ կը կապէ Փաշինեանի վարչակարգին: Երկուքն ալ կ'ուզեն Հայաստանը ունենան իրենց տրամադրութեան տակ որպէս «ծախու ապրանք»... Զտեւաբար երկուքն ալ ամեն ճիգ ըրին եւ կ'ընեն ՀՀ Ընդդիմութեան նախաձեռնութիւնները ձախողեցնելու:

Ներկայիս Հայաստանն ու Արցախը կը գտնուին փակուղիի մէջ: Եւ ենթակայ՝ ատրպէյճանական եւ թրքական նախայարձակման վտանգներուն: Առայժմ Ալիեւի յարձակողականը կասեցուած է Մոսկուայի եւ Արեւմուտքի կողմէ, բայց այս իրավիճակը կրնայ արագօրէն փոխուիլ: Պետք է ենթադրել, որ Պաքու կանաչ լոյս չունի նաեւ Թուրքիայէն... Մոսկուա, Թեհրան, Անգարա շուտով կը հանդիպին: Նոյն ատեն Սեւտական Արաբիա կ'այցելէ Պայտըն: Կը կրկնեմ: Դժբախտաբար ներկայիս Հայաստան խաղաքարտեր չունի այս սակարկութեան մէջ դերակատար կարենալ ըլլալու համար: Այս է իրականութիւնը: Այն փաստը, որ Նիկոլը կը շարունակէ ըլլալ իշխանութեան գլուխ, ցոյց կու տայ, որ Հայաստան եւ Արցախ ձախողած են ի սկզբանէ:

Այս ականապատուած դաշտին վրայ, որո՞նք են հայկական կողմի հաւանական կարելիութիւնները:

Ներկայ դրութեամբ, գերտիրութիւններու վերոյիշեալ խաղակարգը խանգարողը կրնայ ըլլալ միայն ՀՀ Ընդդիմութիւնը: Հայաստանն ու Արցախը այլ խաղաքարտ չունին: Եւ պետք է ընդունիլ, որ այս իսկ պատճառով Ընդդիմութեան ձախողութիւնը մեծապէս ճակատագրական բնոյթ ունի այսօր: Հայաստանի եւ Արցախի հասարակութեան բոլոր շերտերը պետք է այս բանը ճիշդ գնահատեն: Իր կրաւորականութեամբ այս հասարակութիւնը կը դաշունահարէ միայն ինքզինքը: Այս հասարակութիւնը պիտի գիտնայ, որ հզօր Ընդդիմութիւնն է միայն իր ելքը: Ինք ԱՅԼԸՆՏՐԱՆԸ ԶՈՒՆԻ: ԱՅԼԸՆՏՐԱՆԸ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ Է:

Միւս կողմէ, կարելի է անդրադառնալ, որ Ընդդիմութիւնն ալ, իր կարգին, իր ներկայ «մկան»ներով շատ հեռու է որոշիչ գնազուած հանդիսանալէ: Զտեւաբար ան կառավարելի է թէ՛ Փաշինեանի, թէ՛ թշնամիի եւ թէ՛ մեծապետական ուժերուն կողմէ: Առայժմ դաշտը կը պատկանի թշնամիին: Մեծի ՊԵՏԸ Է ԸԱՏ ԱԹԵԼԻ ՄԿԱՆՈՒՄ ՄԵՎ ԸՆԴԴԻՄՈՒԹԻՒՆ: ԸՆԴԴԻՄՈՒԹԻՒՆ՝ ՈՐ Ի ՎԻՃԱԿԻ Է ԼԾԱԿ ԶԱՆԴԻՍԱՆԱԼՈՒ ՆԵՐԿԱՅ ԿԱՅՈՒԹԵԱՆ ՄԵՋ: Ընդդիմութիւն՝ որ ի վիճակի է իրեն պարտադրուած փակուղիին ճեղքելու: Բարեբախտաբար այս գէնը գոյութիւն ունի: Այս գէնը պետք է արա-

ՂՆԵՄԻԷԻ Ս. ԳԵՌՈՐԳ ՎԵՐԱՆՈՐՈՂՈՒԹ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՎԵՐՕԾՈՒՄԸ՝ ՆՈՐ ՕՐՅՆՈՒԹ ՍՐԲԱԼՈՅՍ ՄԻՒՌՈՆՈՎ

Գեղատեսիլ քնութեամբ եւ տեսարժան վայրերով քնորոշուած հայաբնակ Ղնեմիէ գիւղը սուրիահայութեան համար իւրայատուկ նշանակութիւն ունի: Տարեկան բանակումներով եւ ուխտագնացութեամբ յաճախ սուրիահայեր կ'այցելէին Ղնեմիէ: Ամեն տարի, Ս. Աստուածածնայ վերափոխման տօնին յաջորդող Կիրակի օրը ուխտագնացութիւն կը կազմակերպուէր դեպի Ս. Գեորգ եկեղեցի եւ մատաղօրհնէք կը կատարուէր: Ղնեմիէի մէջ կը գտնուի պատմական Ս. Գեորգ եկեղեցին, երիցատունը, յարակից սրահը եւ հայերու պատկանող բնակարաններ: Յետ պատերազմին, Ղնեմիէի Թաղական Խորհուրդին ջանքերով եւ ղնեմիէցիներու բարերարութեամբ, Ս. Գեորգ եկեղեցին վերանորոգուեցաւ, կրկին ծաղկեցնելու Ղնեմիէի եւ շրջանի բնակիչներուն հոգեւոր կեանքը:



Արդարեւ, Ուրբաթ, 8 Յուլիս 2022-ի առաւօտուն, Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան Լիբանանէն վերադարձին, պատուիրակութեամբ ուղղուեցաւ դէպի Ղնեմիէ, ուր Սուրբ եւ Ամմահ Պատարագի ընթացքին Ս. Գեորգ վերանորոգուած եկեղեցւոյ վերօծումը կատարեց, ՆՍՕՏՍ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին ձեռամբ Նոր օրհնուած Սրբալոյս Միւռնով:

Մեր պատմութեան խորքերէն մեզի փոխանցուած Սրբալոյս Միւռնով օծուեցաւ Ղնեմիէի մատուռը եւ երկնառաք բարիքներով օրհնուեցան Ղնեմիէի մեր ժողովուրդի գաւակները, որոնք հակառակ բոլոր դժուարութիւններուն կառչած մնացին մեր ազգային-եկեղեցական արժէքներուն եւ հաւատարմօրէն ծառայեցին սուրիական հայրենիքին:

Արարողութեան ներկայ գտնուեցան պետական անձնակազմիներ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան երիտասարդ Միաբաններէն Հոգշ. Տ. Առաքել Աթղ. Գատեհճեան, որ անցնող շաբաթներուն Արեւայ ձեռնադրուեցաւ, Լիբանանէն հիւրաբար ժամանած Աթժ. Տ. Գրիգոր Զինյ. Եղիայեան, Ազգային Վարչութեան անդամ Արմեն Գասպարեան, Կրօնական Ժողովի անդամ Աթժ. Տ. Մաշտոց Ա. Զինյ. Արապալեան, Լաթաքիոյ եւ ծովեզերեայ շրջանի հոգեւոր հովիւ Աթժ. Տ. Վազգէն Զինյ. Զեօշկերեան, Ղնեմիէի Ս. Գեորգ եկեղեցւոյ Թաղական Խորհուրդի ատենապետ Վահէ Արեճան, Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ Թաղականութեան նախկին ատենապետ Վահէ Կարճիկեան եւ Նորանշանակ ատենապետ տղոթ. Մինաս Պալեան, Լաթաքիոյ ԲԱԸՄ-ի ատենապետ տղոթ. Նիկոլ Մատանի եւ հաւատացեալ ժողովուրդը:

Սրբազան Հայրը Սրբալոյս Միւռնով կատարեց վերօծումը՝ եկեղեցւոյ մայր դրան, սիւներուն եւ Ս. Խորանին: Այս առիթով օծուեցան Նոր սրբապատկերներ՝ Աստուածամօր, Յիսուսի մկրտութեան եւ Ս. Գեորգի նուիրում:

Արարողութենէն ետք, Սրբազան Հայրը թափօր կազմած, ԶՄԸՄ-ի փողերախումբին նուագակցութեան ներքոյ ուղղուեցաւ դէպի եկեղեցւոյ յարակից սրահը, ուր իր սրտի խօսքը ուղղեց ներկաներուն, բնաբան ունենալով (Ղկ 6. 46-49) համարները, որոնց ընդմէջէն ան ներկաներուն պատուիրեց ժամի վրայ, այլ խօսքով Զրիստոսի ուսուցումներուն վրայ կառուցել մեր հաւատքի տունը, որպէսզի հակառակ բոլոր դժուարութիւններուն կանգուն եւ հաստատուն մնայ:

Սրբազան Հայրը դիտել տուաւ, որ Ղնեմիէի Ս. Գեորգ վերանորոգուած եկեղեցւոյ Նոր Միւռնով վերօծումը հրաւեր մըն է վերականգնելու մեր եռանդը, աշխատասիրութիւնը, հաւատքը եւ ապագային նկատմամբ մեր ունեցած յոյսը:

Մասիս Եպիսկոպոս մաղթեց, որ վերօծումի այս բովանդակալից արարողութեամբ կրկին պայծառանայ Ղնեմիէի եկեղեցին, վերանորոգուի նաեւ յարակից սրահը եւ ուխտաւորներ ամեն տարի այցելեն եւ իրենց ուխտը կատարեն: Ան մաղթեց նաեւ, որ Եագուպիէի, Թել Ապիատի եւ Սուրիոյ այլ շրջաններ ազատագրուին եւ այնտեղ եւս մեր ժողովուրդի գաւակները համախմբող ուխտագնացութիւններ կազմակերպուին:

Սրբազան Հայրը իր ուրախութիւնն ու գոհունակութիւնը յայտնելով, շնորհաւորեց շրջանի հայութիւնը, գնահատեց եկեղեցւոյ մէջ ծառայողները, բարերարները եւ թաղականութիւնը, որոնք ձեռք-ձեռքի տալով յաջողցուցին վերանորոգութեան ծրագիրը եւ մեր բոլորին երազը իրականացուցին:

Թող որ Ղնեմիէ ամենը դարձեալ պայծառանայ շրջանի հայութեան ներկայութեամբ եւ ուխտաւոր ժողովուրդի այցելութեամբ:

Մարինա Չիլիբոջեան-Պողիկեան

գօրէն ձեւաւորուի: Ան պետք է արագօրէն իր ռազմավարական դիրքերը գտնէ: ՊԻՏԻ ԳԻՏԱԿՅԻՆԸ, որ մարտահրաւերը դրուած է մեր առջեւ կենաց մահու եզրերով: Զտեւաբար մեր հակադարձութիւնն ալ, իր կարգին, պիտի ըլլայ հզօր, անխնայ, անյապաղ, տեղաշարժային եւ վերջնական:

ՍՈՒՐԻՈՅ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՀՐԴՊԱՐԱԿԵՑ 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՉԱՆԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆԻ ԱԲՐՏԱԿԱՆ ԿԱՐԳԻ՝ ՊԱՔԱՆՈՐԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԱՐԴԻՆՔՆԵՐԸ

Սուրիոյ Կրթութեան Նախարարութիւնը Յինգշաբթի, 7 Յուլիս 2022-ի երեկոյեան հրապարակեց 2021-2022 ուսումնական տարեշրջանի երկրորդականի աւարտական կարգի՝ պաքալորիայի, պետական քննութիւններուն արդիւնքները:

Նախարարութեան համաձայն, գիտական բաժինէն Սուրիոյ բոլոր նահանգներէն քննութեան ներկայացած է 134. 815 աշակերտ-աշակերտուհի, յաջողած՝ 74. 478 աշակերտ-աշակերտուհի, հետեւաբար գիտական բաժինի յաջողութեան տոկոսը եղած է 55,24 առ հարիւր: Նախորդ տարուան 2020-2021 տարեշրջանի գիտական բաժինի յաջողութեան տոկոսն էր 63,81%:

Գրական բաժինէն քննութեան ներկայացած է 70.815 աշակերտ-աշակերտուհի, յաջողած՝ 38. 223 աշակերտ-աշակերտուհի, 53,98 առ հարիւր յաջողութեան տոկոսով: 2020-2021 տարեշրջանի գրական բաժինի յաջողութեան տոկոսն էր 52,14%:

Հալէպ նահանգի մակարդակով երեք հալէպահայ աշակերտներ, Զարէն Գատեհճեան եւ Պօղոս Կարապետեան Ազգային Զարէն Եփիէ Ծեմարանէն, իսկ Ռաֆայէլ Ասատ Լ. Նաճարեան-Գ. Կիւլպէնկեան Կեդր. Վարժարանէն ներառուեցան առաջնակարգ տասը աշակերտներու ցանկին մէջ:

Զարէն Եփիէ Ազգ. Ծեմարան

Գիտական բաժին
Մասնակցողներու թիւ՝ 36
Ցաջողածներու թիւ՝ 36
Ցաջողութեան տոկոս՝ 100%

Զարէն Գատեհճեան	2886
Սարին Շահինեան	2872
Աբրահամ Աւընեան	2857
Սելա Պազարպաշեան	2853
Գօգօ Ղարիպեան	2827
Աննա Չալաքեան	2820
Արման Տէր Պետրոսեան	2809
Սարին Պերթիզեան	2796
Այգ Գեորգեան	2765
Նուշիկ Գաթրճեան	2690
Համազասպ Շաքարեան	2683
Աննա Մարիա Լեպլէպճեան	2661
Քրիստափոր Ֆրանքեան	2659
Լիլիթ ժամկոչեան	2654
Սերլի Մուտարիկեան	2626
Կարապետ Ամպարճեան	2625
Յովսէփ Իշխան Մարաշլեան	2624
Սարգիս Թաշճեան	2616
Շուշի Շահինեան	2615
Սիմոն Սիմոնեան	2609
Մեղրի Սուսանի	2599
Սերենա Պերպրեան	2592
Ալին Բիլճեան	2576
Վանայ Տիշոյեան	2565
Միրէլ Չաղլասեան	2552
Լուսիանա Գայապալեան	2547

Յարութ Մաւեան	2539
Ներսէ Մանբուրեան	2468
Մակտալէնա Աւագեան	2458
Աննա Մարիա Պետրոսեան	2443
Մարք Պապլանեան	2422
Գառնի Շահինեան	2402
Միլինա Տօնապետեան	2347
Դալիա Կեօղլանեան	2332
Նանոր Մարտիկեան	2224
Նաթալի Պապայեան	1917
*Կալին Պալապանեան	2602

Գրական բաժին
Մասնակցողներու թիւ՝ 13
Ցաջողածներու թիւ՝ 11
Ցաջողութեան տոկոս՝ 85%

Պօղոս Կարապետեան	2624
Բալիկ Խրոյեան	2186
Էլիզապէթ Խաչատուրեան	2072
Մանուէլ Արթինեան	2008
Սերլի Կոճիկեան	1951
Նժդէհ Կարապետեան	1924
Գառնիկ Այնթապի	1821
Աննա Հատտատ	1799
Սարգիս Հալլաճեան	1710
Պետրոս Սեմերճեան	1673
Գեորգ Սիմոնեան	1666

*Համակարգչային թեքնիք վրիպումի պատճառով առկայի կը մնայ առաջնակարգ աշակերտուհի Կալին Պալապանեանի արդիւնքը:

Լ.Նաճարեան-Գ.Կիւլպէնկեան Կեդրոնական Վարժարան

Գիտական բաժին
Մասնակցողներու թիւ՝ 32
Ցաջողածներու թիւ՝ 28
Ցաջողութեան տոկոս՝ 88%

Ռաֆայէլ Ասատ	2886
Ճորճ Օհագեան	2836
Մարիլին Շուշանեան	2835
Ապետ Թայիարա	2798
Յարութ Թազաւորեան	2756
Ռոզալի Պարտիզպանեան	2726
Սելին Ուրիշիկեան	2721
Լարիսա Հատտատ	2708
Լեւոն Բեօսեան	2680
Մայա Սքահալ	2656
Սարո Բասսիս	2638
Արմիկ Պօշկեղեան	2632

Միրել Աթոքեան	2613
Գասպար Խլոյեան	2569
Միրնա Տապալաղ	2506
Նանի Թելեքճեան	2477
Գեորգ Եղեան	2454
Ճովակ ՏէրՅովհաննեսեան	2408
Սելա Չաքարեան	2384
Վահէ Բեպապճեան	2372
Ճորճ ժագօ	2344
Սերլի Համմասեան	2322
Նաթալի Ղուլամ	2247
Կալին Խարապոյեան	2194
Յերա Խաչատուրեան	2140
Յակոբ Փամպուքեան	2108
Սերենա Բեպապճեան	2101
Բարտի Կարապետեան	2082

Կրթասիրաց

Ս. Չեմպերճեան Երկրորդ. Վարժարան

Գիտական բաժին
Մասնակցողներու թիւ՝ 62
Ցաջողածներու թիւ՝ 50
Ցաջողութեան տոկոս՝ 81%

Միլատ Նաւում	2781
Միրիամ Չիանէ	2749
Միրա Ֆատիլի	2747
Ժան Պալիթ	2725
Ժէնի Պիթար	2722
Հայտի Զապապէ	2705
Ճորճ Ռուսէլ	2692
Միրթա Չալէմ	2683
Միշէլ Ղազալ Ալպր	2677
Ռաֆա Շահին	2624
Մայք Հաննա	2606
Մարինա Նալպանտ	2593
Նանսի Ռաթոմ	2591
Ռիթա Խաչօ	2572
Ժեսիքա Հասքուր	2550
Էլիա Ուրֆալի	2541
Իլիանա Շահուտ	2526
Ռուպինա Մազմանեան	2519
Ապանոպ Հիլալ	2514
Իվա Յովակիմեան	2508
Անժէլ Շահուտ	2473
Դալար Թորոսեան	2452
Քրիսթինա Հայտար	2449
Լոր Պապիք	2448
Նաճիպ Ճրմբլի	2436
Ժուլէ Ալնասսար	2382
Եորքի Ժիօ	2380
Ժոզէֆ Պարամ	2365
Քրիստինա Սայլէ	2351

Կոստանդին Գատահ	2340
Էնճի Ալ Սաուպ	2246
Ժոզէֆ Պազրճի	2240
Ժուլի Նուհ	2237
Փաթրիսիա Հազանի	220
Աննա Մարիա Իպրահիմ	2097
Ուլա Ալդարալի	2087
Գարլա Նամէ	2086
Սուհէլ Շահուտ	2070
Գարլա Արուշ	2066
Նայա Արքիօ	2064
Միրիան Իտլիպի	2043
Լանա Սաատի	2038
Ժէնի Գազանճի	2037
Նայա Գիրիաքոս	2002
Վիոլէթ Պայտուն	1941
Փիեռ Պալի	1936
Ալթունէլլա Ճանճի	1928
Ռոյ Սարգիսեան	1866
Իլիա Թաուաիֆի	1841
Էլերա Ֆաթմա	1774

Գրական բաժին
Մասնակցողներու թիւ՝ 6
Ցաջողածներու թիւ՝ 6
Ցաջողութեան տոկոս՝ 100%

Փամէլա Թաշճի	2594
Ալեքիս Խուրաճեան	2202
Կալին Հալլաճեան	1850
Ռազուգ Ապտ Ալքարիմ	1789
Անուար Գասիս	1645
Լեւոն Պարսումեան	1571

Հայ Աւետարանական Բեթէլ Երկրորդական Վարժարան

Գիտական բաժին
Մասնակցողներու թիւ՝ 16
Ցաջողածներու թիւ՝ 16
Ցաջողութեան տոկոս՝ 100%

Շագա Տիպէ	2898
Ռանա Մարթա	2894
Հայկա Մասրիլէ	2893
Ժօէլ Ալանասա	2893
Նապիլա Արնուք	2867
Միրիամ Ալշանասա	2847

Քրիստ Եաղճեան	2816
Միլթիա Իսա	2801
Բենիամին Հեքիմեան	2773
Միրիամ Հաննա	2718
Մարիա Բերլա Խաչազճեան	2547
Լուսինէ Իզապէլ Նանճեան	2441
Մարիան Մարապեան	2335
Էլիա Տազազ	2255
Նուր Ֆարահ	2165
Աննա Պետրոս	1870

www.kantsasar.com
www.kantsasar.com

ԱԴԱՄԵԱՆԻ ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆԸ



Յակոբ Միքայելյան

Երբ տարիներ առաջ Երևանի Տրամադիկական Թատերախումբը Հալեպ այցելեց, ներկայացումներու ավարտին հիւրը եղաւ ԶԵԸ-ի Պ. Ադամեան թատերախումբին, այցելելով անոր կեդրոն-թատերասենեակը ԶԲԸՄ-ի շէնքին մէջ: Դերակատարները փոխադարձ ծանօթացումներ յետոյ, հետաքրքրութեամբ դիտեցին պատերուն վրայի լուսանկարները եւ ծանօթացան արխիւներու պահարանի պարունակութեան, ուր ամենայն բծախնդրութեամբ իրար կողքի դասաւորուած էին թատերախումբի բեմականացուցած ներկայացումներուն ակտները, տեսաերկերը, յայտագիր-գրքերը, աֆիշ-որմագ դներն ու տոմսերէն նմոյշներ:

– Այսքան կանոնաւոր արխիւ ոչ մէկ տեղ չենք տեսել, նոյնիսկ մեր մօտ չունենք, – ըսաւ դերասաններէն մին. նոյն կարծիքը յայտնեցին նաեւ միւսները: Առաջին անձը չէր, որ կը հիանար թատերասենեակի տպաւորիչ պարունակութեամբ: Արդարեւ Ադամեան թատերախումբի անդամներէն ոմանք յատուկ նուիրումով փարած են գործին, – անշուշտ՝ սիրով եւ անվճար, – ու ամէն ինչ կ’ընեն, որ Ադամեանը լաւագոյնս դրսեւորուի, իրենց հանգիստի ժամերը նուիրելով կազմակերպչական աշխատանքի, իւրաքանչիւր իր նախափրած ասպարէզին մէջ: Այս նուիրեալներուն մէջ իւրայատուկ է երկարամտայ վաւատակ ունեցող Ներսէս Տաղլեանը, որուն վերջին իրագործումը հանդիսացաւ Թատերախումբի 60-ամեակին նուիրուած «Յուշամատենան», որ պատրաստուեցաւ գործակցութեամբ թատերական յանձնախումբի անդամներուն:



328 էջերէ բաղկացած այս յուշամատենան արգասիքն է համարեա՛ 10 տարիներու աշխատանքի, (Նկատի առնելու է Սուրբոյ պատերազմի տարիները), որուն հիմնական «սեւ» աշխատանքը կատարած է ինք, որ միեւնոյն ժամանակ ատենապետն է թատերական յանձնախումբին: Պատմական բաժինը իմ ստորագրութիւնս կը կրէ, ու որոշ օժանդակութիւն մը ունեցած եմ անոր խմբագրական աշխատանքին մէջ, սակայն ալպոմային բաժինը լրիւ Տաղլեանին կը պարտինք, ուր մանրամասն ներկայացուած են 60 տարիներու ընթացքին բեմ բարձրացած բոլոր ներկայացումներէն տեսարաններ, անոնց դերակատարները, բեմադրիչները, բեմելներուն թիւն ու վայրը: 60 տարուայ ընթացքին 64 հայ եւ օտար հեղինակներու 96 թատերգութիւն, 621 ելոյթներով, 16 բեմադրիչներու եւ 355 դերակատար-դերակատարուհիներու մասնակցութեամբ: Պատկառելի, խօսուն թիւեր:

Մատենակին մէջ ներկայացուած են իւրաքանչիւր բեմադրիչի բեմադրած գործերու ցանկը, դերակատարներու մասնակցած թատերգութիւններու լրիւ ցանկերը, թեքնիք կազմի՝ բեմավար, բեմայարդար, երաժշտական յօրինում, դիմայարդար, նախագծող, գգեստաւորում, լուսաւորում, ձայնաւորում, շինարարական... բոլոր, բոլորին անունները: Թատերախումբին ստացած տիպալուսերն ու պատուոյ գիրերը: Չանագան տարիներու թատերական յանձնախումբի կազմերուն ու անդամներուն լուսանկարներն ու անունները:

Թատերախումբի անդամներու զանազան տարիներու վաստակին համեմատ շքանշաններով պարգեւատրուածներու ցանկ: Թատերասենեակի հիւրերը, անոնց գրաւոր տպաւորութիւնները Ոսկեմատենակին մէջ եւ մեզմէ առջաւետ բաժնուած Ադամեանականներու անունները:

Յուշամատենակին սկիզբը տեղադրուած են Օրինութեան գիրքը եւ ողջոյնի խօսքեր:

Վերջին էջերուն մէջ թատերախումբի զանազան ձեռնարկներու, դասախօսութիւններու, հաւաքներու, յոբելիական երեկոներու նկարներ եւ յիշատակութիւններ: Երբեք հաստատուած Ադամեանականներու ինքնահաստատման նախաքայլերը նկարներով:

Այս կողողային գործը լոյս աշխարհ եկաւ օժանդակութեամբ ԶԲԸՄ-ին եւ ԶԵԸ-ին, առաւել անհատ մեկենասներու նուիրատուութեանց:

Միակ անպատեհութիւնը այն է, որ գիրքը բաւական ծանր կը կշռէ (1,5 քիլոկրամ), ատոր համար ալ գայն աշխարհի զանազան գաղութները փոստով առաքելը ահագին ծախսի կը նայի, սակայն անպայման ճարը կը գտնուի եւ օրինակ մը կը հասնի իւրաքանչիւր Ադամեանականի:

Հալեպի Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան Պետրոս Ադամեանի անունը կրող թատերախումբը երկրի ծանր պայմաններուն տակ իսկ դարձած է առաջնութիւնը իր երթը դէպի նորանոր նուաճումներ:

Թուրքիոյ նուրջ

ԹՈՒՐԷԻԱ ԿՐԿԻՆ ԱՌԱՋԱՐԿԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՌԻՆԵՆԱԼ ԱՆՊԱՐԱՅԻ ԿԱՄ ԵՐԵՎԱՆԻ ՄԷՋ

«Երկիր»- Թուրքիա առաջարկած է Հայաստանի հետ կարգաւորման հերթական հանդիպում ունենալ Անգարայի կամ Երեւանի մէջ: Այդ մասին յայտնած է ռուսական «Риа Новостի» գործակալութիւնը: Յիշեցնենք, որ ՀՀ ներկայացուցիչ Ռուբէն Ռուբինեանի եւ Թուրքիոյ ներկայացուցիչ Սերտար Քըլմէշի հանդիպումները մինչեւ օրս տեղի ունեցած են միայն Մոսկուայի եւ Վիեննայի մէջ:



ՊՈԼՍՈՅ ՀԱՅՈՅ ՊԱՏՐԻԱՐԷ ՍԱՀԱԿ ՄԱՇԱԿԵԱՆ ՄԵԿՆԱԲԱՆԱԾ Է ՓԱՇԵՆԵԱՆ-ԷՐՏՈՂԱՆ ՀԵՌԱԶՅՆԱՅԻՆ ԶՐՈՅՅԸ



«Երկիր Մետիա»- Պոլսոյ Հայոց պատրիարք Սահակ Մաշալեան ուղերձ հրապարակելով յոյս յայտնած է, որ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի եւ Թուրքիոյ նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողանի հեռաձայնային զրոյցը բարեկամութեան նոր էջ կը բանայ թուրք-հայկական յարաբերութիւններուն մէջ:

ԹՈՒԱՅՆԱՅՈՒՄ...

Սկիզբ՝ էջ 7

խաղատութեամբ մը անդրադարձնել, որ, օրինակ ճերի մուկին ըրածները Թոմի կատուին հանդէպ այնքան ալ ընկերական չեն եւ թէ ընկերները նման բաներ պետք չէ ընեն իրարու եւ այլն:

Եւ ինչպէս ամէն բան, ֆիլմերն ու խաղերը եւս պետք է չափաւոր կերպով օգտագործել, մոլութեան չհասնելու համար. իսկ մոլութիւնը, ինչ ալ ըլլայ անոր առանցքը, միայն ու միայն ժխտական է:

ԱՐԹՈՒ ՓԱՅՏԵԱՆ...

Սկիզբ՝ էջ 7

մեր դժուարութիւններին միասին յաղթահարել եւ կարծում եմ, որ թէ՛ տեղի նուիրատուների ու ընկերների, թէ՛ մեր աշխարհասփիւռ ընկերների եւ թէ Համագայինի Կ. Վարչութեան օգնութեամբ մենք կը կարողանանք դժուարութիւնները յաղթահարել ու մեր նպատակները իրականացնել:

Եթէ մինչեւ վերջ խօսելու լինենք

ռուսահայ իրականութեան մասին, պետք է կարեւոր ընդգծում անեմ. մենք ամէն ինչ անելու ենք իրականութիւն դարձնելու համար այն բոլոր ծրագրերը, որոնք նախատեսուած են թէ մեր վարչութեան, թէ պատգամաւորական ժողովին արծարծուած խնդիրներու լոյսին տակ: Մենք ամէն ինչ անելու ենք, որ Համագայինը կայանայ ոչ միայն իբրեւ կառոյց, այլ դառնայ կարեւոր ներկայութիւն ռուսահայ իրականութեան մէջ: Դառնայ այն կարեւոր հարթակը, որ պետք է իրականացնի Համագայինի ծրագրերը եւ դառնայ ռուսահայ կենսի տարբեր հարթակները միացնող եւ ուղղութիւններ նախանշող կարեւոր օղակ: Մենք, բոլոր միւս միութիւնների եւ կազմակերպութիւնների հետ (ՅՕՄ, ՀՄԸՄ եւ այլն) պարտաւոր ենք պատուով կատարել մեր դիմաց դրուած խնդիրները, որովհետեւ այս անծարածիր երկրում այլ ճանապարհ չկայ: Հայ երեխան պետք է կարողանայ հայերէն խօսիլ եւ հայեացքը միշտ յառէ մայր հայրենիք ու անպայման Հայաստան վերադառնալու տենչով ապրի:

Յաջողութիւն մաղթենք այս խոստմնալից գրասենեակին:

ՊԱՇՏՕՆԵԱՅԻ ԿԱՐԻՔ

Ազգ. Զարէն Եփփէ ճեմարանը կարիքը ունի գիտական նիւթերու եւ լեզուներու դասաւանդման համար վկայեալ ուսուցիչ-ուսուցչուհիներու:

Փափաքողները կրնան դիմել ճեմարանի տնօրէնութեան, հեռաձայնելով հետեւեալ թիւերուն. 4643363-53 / 0967560111

Տնօրէնութիւն Ազգ. Զարէն Եփփէ ճեմարանի

ԱՐԱՄՕ



Տղթ. Արամյո Մանճեան

Արամօն (Արամայ, Արամին) կը գտնուի Սուրիական Արաբական Հանրապետութեան Լաթաքիոյ (ԱԼ-ԼԱՉԵԻԷ) նահանգին արեւելեան կողմը (Բանքեր Ե. Բ. Գիտ. Պատ. 2921No2-20-44 Յակոբ Զոլաքեան-Արամօ գիւղի մօտիկ հայոց վանքը):

Լաթաքիացի պատմաբան, Լաթաքիոյ թանգարանի տնօրէն Զայտար Նայսէ կը գրէ. «Արամօ անունը ասորերէն է, ասորիական, եղած է բնական ապաստարան գիւղացիներուն, որոնք փախած են Օսմանեան Կայսրութեան հալածանքներէն»:

Ըստ իրեն. «Ասորերէն Արամօ-Արամա կը նշանակէ ցորեն կամ քարերու կուտակում: Ժայռափոր քարայրներուն մէջ ցորեն կ'ամբարուէր»:

Իմ տեղեկութիւնները Արամիոյ անուան մասին քաղած եմ արամոցի հալիլ Տարուսէն: Ան եւ քոյրը հետս խօսած են Արամիոյ բարբառով: Այդ



բարբառը Զեսապի, Սուսա լեռան, Ղնեմիէի բարբառներուն նման է: Ըստ հալիլ Տարուսի, - որ մինչեւ իր մահը Արամիոյ եկեղեցւոյ պահապանը, դպիրը, թաղականութեան ատենապետը եղած է (իսկ այժմ իր որդին՝ մէթր Ներսէ Տարուս), - Արամօ գիւղը Արամ անունով սիրուած քահանայ մը ունեցած է, որուն անունով ճանչցուած է:

Իմ ուսումնասիրութիւններուն եւ պատմաբաններու տեսակետին համաձայն, ծովափնեայ հայութեան ներկայութիւնը այնտեղ կ'երկարի մինչեւ Զայոց արքայ Մեծն Տիգրան եւ մինչեւ Կիլիկիոյ Զայոց Թագաւորութիւն ու մինչեւ մեր օրերը:

Արամիոյ հայ բնակչութիւնը ներառուած է Օսմանական Կայսրութեան աքսորի հրամանին մէջ: Աքսորուած է դէպի Սուրիոյ Զոմս, Զամա քաղաքները: Ունեցած է կորուստներ եւ անմարդկային վերաբերմունքի արժանացած գաղթի կարաւաններուն ուղեկցած թուրք ասկերներու կողմէ:

Տարիներ ետք, ողջ մնացածները վերադարձած են Արամօ: («Գանձասար», «արաբերէն Ազդակ» Ն. Մ.):

20-րդ դարու երկրորդ կէսէն սկսեալ ականատեսը եղած եմ Արամիոյ եւ արամոցիներու հայկական կեանքին:

Ամէն տարի 15 Օգոստոսի մօտիկ Կիրակին այնտեղ կը յիշատակուէր Սուրբ Աստուածածնայ տօնը: Ազդակ օրաթերթ «50 տարի առաջ» իր բաժնով կը յիշէ. «Թեմի առաջնորդ Ղեւոնդ Սրբազանին խօսքերը արաբերէնով փոխանցեց Լաթաքիոյ հոգեւոր հովիւ Ղանիէ Զինյ. Գեորգեան»:

Սրբազանը կը ժամանէր Արամօ, Շաբաթ առաւօտեան կը կատարէր Սուրբ Պատարագը, ապա կը մեկնէր Զեսապ:

Ամէն տարի Օգոստոս ամսուն կը տօնուի Աստուածածնայ տօնը եւ այդ օրը Արամիոյ Ս. Պատարագը կը մատուցանէ Բերիոյ Զայոց Թեմի Առաջնորդը: Արամօ պատարագ մատուցած են՝ Ղեւոնդ սրբազանը, Տաթեւ սրբազանը, Սուրէն սրբազանը, Շահան սրբազանը եւ Մասիս սրբազանը:

Լաթաքիոյ Թաղականութեան խորհուրդի անդամ ըլլալէ ետք, Ս. Աստուածածնայ տօնին ընտանեօք կը մեկնէինք Արամօ:

Առաջին մեկնումիս, պատահմամբ մեքենավարը արաբ դասընկերս էր: Երբ իմացաւ, որ Արամօ կ'ուղղուինք, պատմեց. «Անցեալ տարի փոքր երեխայիս ոտքերը թոյլ էին, բերինք զինք Արամիոյ ժայռափոր ուխտատեղին, Սուրբ Գեորգ, քրիստոնէայ արաբները կ'ըսեն Մար Ծրճոս, իսկ իսլամ այելիները կըրտր եւ այնտեղ երկու օր մնաց մօրը հետ: Փառք Աստուծոյ, օգտուեցաւ»: Սուրբ Գեորգի ուխտատեղիին մասին այս վկայութիւնը զիս ոգեւորեց:

Արամիոյ եւ Լաթաքիայէն նախօրօք ժամանած երիտասարդներ Ուրբաթ օրուրնէ Արամիոյ եկեղեցի կը ժամանէին: Կը պատրաստուէր ականական հարիսան եւ մինչեւ արեւածագ ուրախութիւն, շուրջպար տեղի կ'ունենար:

Սուրէն սրբազանի առաջնորդութեան տարիներուն ամէն տարի այս ուխտագնացութիւնը կը կազմակերպուէր անպայման:

Սրբազանը, Ազգային Վարչութեան ներկայացուցիչին հետ ճամբայ կ'ելլէր Զալէպէն դէպի Արամօ: Լուսաբացին կը հասնէին Արամօ: Կը դիմաւորուէին անհամբեր սպասող հաւատացեալներու կողմէ: Սրբազանը կը կատարէր Սուրբ Պատարագը, կը քարոզէր, եւ կ'օրհներ հարիսան,

ապա հանդիպում կ'ունենար Արամիոյ թաղականութեան հետ ու կը գրուէր անոնց դիմագրուած դժուարութիւններու յաղթահարման շուրջ:

1994-ին, Արամիոյ թաղականութիւնը խնդրեց Սրբազանէն սրահ մը կառուցել տալ, որպէսզի օգտագործուի բոլոր առիթներուն:

Սուրէն Սրբազանը, որ կոչուած էր շինարար Սրբազան խոստացաւ հետապնդել այս առաջարկին իրագործման կարելիութիւնները, ապա ուղղուեցաւ Զեսապ:

Շաբաթ մը ետք, Ազգ. Առաջնորդարանը կ'որոշէ հինգ հարիւր հազար



ս.ո. տրամադրել Արամիոյ եկեղեցւոյ սրահի կառուցման համար: Մէկ տարուան ընթացքին սրահին կառուցման գործերը կ'ամարտին:


Նոյն տարին կ'իմանանք, որ Ս. Գեորգ սրբավայրի խաչքարը ճերմակ կիրով ներկուած է: Լաթաքիոյ հայոց թաղական խորհուրդը, որ կառավարութեան հետ լաւ յարաբերութիւններ ունէր բողոքագիր մը կը ներկայացնէ նահանգապետին:

Թաղական խորհուրդի ատենապետ երկրաչափ Պօղոս Ղազարեան, որ նոյն ատեն Լաթաքիոյ փոխնահանգապետն էր, պետութեան կողմէ լիազօրուած յանձնախումբ մը կ'ուղարկէ Արամօ: Կ'որոշուի այդ տարածքի թափուսիքը կալուած յանձնել Բերիոյ Զայոց Թեմին:

Արամօ գիւղին մէջ կալուած եւ հողատարածք ունին Տարուս, Շավիթոյ, Ֆարահ, Խալիլ, Գազանճի եւ Ֆարահ ընտանիքները: Ասոնք ինչ հայեր են, արաբախօս, սակայն նոր սերունդը հայախօս է, կ'ուսանի կամ կ'աշխատի Լաթաքիա, սակայն կը մնայ կառչած իր բնակավայրին:

Այս ընտանիքներուն մէկ մասը դատարանի դիմելով իրենց մակաւնուները հայացուցին: Այսպէս՝ Ֆարաիդ-Յարութիւնեան, Գազանճի-Գազանճեան, Խիչան-Խաչատուրեան:

Արամիոյ Զայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ անունը Սուրբ Ստեփանոս է, քրիստոնէայ առաջին նախավկային անունով: Եկեղեցին հնադարեան է, կառուցուած է 1267-ին:



Արամիոյ հայերը, ինչպէս նաեւ Սուրիոյ հայաբնակ ծովափնեայ շրջաններու՝ Զեսապի, Ղնեմիէի եւ Եագուպիէի հայերը ծաղկուն շրջան ապրեցան մինչեւ 2011 թուական, երբ «արաբական գարուն» կոչուած սեւ, կործանիչ ալիքը եկաւ քանդել ամէն ինչ:

Ահաբեկչական զինեալ խումբեր փորձեցին գրաւել Արամօն:

Խաղաղ բնակիչները հեռացան ու գիւղը սաստիկ յարձակումի ենթարկուեցաւ:

Ահաբեկիչներու անընդհատ յարձակումները ետ մղուեցան շնորհիւ սուրիական բանակին եւ ժողովրդական ուժերուն: Ահաբեկիչները չկրցան տիրանալ Արամիոյն, հետեւաբար եկեղեցին գերծ մնաց քանդումէ:

Արամօն ինչպէս անցեալին, այնպէս ալ այսօր կը վայելէ Բերիոյ Զայոց Թեմի Առաջնորդ Գեորգ. Տէր Մասիս Սրբ. Եպս. Զօպուեանի հովանաւորութիւնն ու հոգատարութիւնը:

Լաթաքիոյ եւ շրջանի հոգեւոր հովիւ Տէր Վազգէն Զինյ. Զեօշկերեան սրբազանին հովանաւորութեամբ կը ծառայէ եկեղեցւոյ ծուխին:

Սուրիոյ ժողովուրդը համբերութեամբ կը սպասէ բռնագրաւուած բոլոր տարածքներուն ազատագրումին:

ՀՕՄ-Ի ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ 27-ՐԴ ՊԱՏՊԱՆՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆՈՐ ՀՈՐԻՉՈՆՆԵՐ ԲԱՑԱԲ

Արցախեան պատերազմը, հայրենի տարածքներու կորուստը, հազարավոր մեր հերոս հայրենի պաշտպաններու նահատակութիւնը, տնտեսական ճգնաժամը եւ այս բոլորին առընթեր ահաւոր թագաւարակը հսկայական աւերներ գործեցին մեր հայրենիքէն ներս՝ տեղահան ընելով մեր սիրելի Արցախի ու հայրենի սահմանագծի մէջ ապրող ժողովուրդի հսկայական զանգուածը: Այսուհանդերձ, համայն հայութիւնը հաստատակամ մնաց եւ օգնութեան ձեռք երկարեց հայրենի իր ժողովուրդին:

Բնական է՝ մարդասիրական իր գործունէութեամբ իր ժողովուրդին կողքին մնաց նաեւ Հայ Օգնութեան Միութեան (ՀՕՄ) ողջ ընտանիքը եւ յատկապէս Հայաստանի իր միաւորը, որուն այս եւ այլ կարեւոր աշխատանքներու արժեւորումը կատարուեցաւ ՀՕՄ-ի Հայաստանի Շրջանային 27-րդ Պատգամաւորական ժողովին, որ տեղի ունեցաւ 25-26 Յունիս 2022-ի շա-



բաթավերջին Երեւանի մէջ, մասնակցութեամբ 45 պատգամաւորներու եւ հրաւիրեալներու, որոնց կարգին էին՝ ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան ներկայացուցիչ Համեստ Սասունեանը, ՀՕՄ-ի Արցախի վարչութեան ատենապետ Լիլիթ Մարտիրոսեանը, ինչպէս նաեւ ՀՕՄ-ի Հայաստանի Շրջանային վարչութեան ու ժողովի կողմէ հրաւիրեալներ:

Հայաստանի, Արցախի եւ ՀՕՄ-ի քայլերգներու խմբերգումէն ետք ժողովի բացումը կատարեց ՀՕՄ-ի Հայաստանի ընթացակարգ Շրջանային վարչութեան ատենապետ Չոյա Զոչարեան, որ հպանցիկ ակնարկ մը նետելով ՀՕՄ-ի Հայաստանի շրջանի 30-ամեայ անցած ուղիին վրայ՝ վստահեցուց, որ 1991-ի ազատամարտի օրերուն հիմնուած ՀՕՄ-ը մայրական իրաւունքով 30 տարի գործած եւ մեծ ընտանիք դարձած է: Աւելին. ՀՕՄ-ը վերջին տարիներու պատերազմական եւ մանաւանդ համաճարակի օրերուն չէ ընկճուած, ընդհակառակն, հայրենասիրութեամբ յառաջ գացած է, եւ յոյս յայտնեց, որ 27-րդ ժողովէն ետք եւս կը շարունակուի ՀՕՄ-ի առաքելութիւնը:

ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան անունով ժողովը ողջունեց Համեստ Սասունեանը եւ ընդգծեց, որ ՀՕՄ-ը պարտաւոր է դիմագրաւել բոլոր մարտահրաւերները, եւ այս իմաստով ան վստահեցուց, որ միշտ մնացած է պատենչի վրայ եւ կատարած է իր առաքելութիւնը բոլոր մակարդակներու վրայ՝ օգնութեան ձեռք երկարելով մարտի դաշտէն մինչեւ հիւանդին ու կարօտեալին: Սասունեանի համոզմամբ, ՀՕՄ-ը կրնայ աւելին կատարել, այնքան ատեն որ աշխարհի ՀՕՄ-ի բոլոր միաւորները ըլլան հայրենիքի հետ:

Սրտի խօսք արտասանեց նաեւ ՀՕՄ-ի Արցախի վարչութեան ատենապետ Լիլիթ Մարտիրոսեանը, որ ողջունելէ ետք ժողովականները, երախտագիտութիւն յայտնեց ՀՕՄ-ի մեծ ընտանիքին եւ յատկապէս ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան՝ Արցախի աջակցելուն եւ մասնաւորաբար 2020-ի պատերազմի օրերուն նիւթապէս եւ բարոյապէս Արցախին թիկունք կանգնելուն համար: Ընկերուհին նաեւ յատուկ շնորհակալութիւն յայտնեց ՀՕՄ-ի Հայաստանի Շրջանային վարչութեան, որ պատերազմի եւ յաջորդող օրերուն օգնեց Արցախին:

Գնահատանքի ելոյթ ունեցաւ նաեւ Գերագոյն Մարմինի անդամ Իկոր Սարգսեան, որ անդրադառնալով ՀՕՄ-ի մեծ ընտանիքի 110-ամեայ եւ ՀՕՄ-ի Հայաստանի միաւորի 30-ամեայ գործունէութեանը՝ հաստատեց, որ ՀՕՄ-ը գործած է անշահախնդիր նուիրուածութեամբ, ամբողջ հոգիով մեծ գործ կատարած է հայապահպանման, ազգի, հայրենիքի, պետականութեան հզօրացման ու հայրենիքի զաւակներուն օգնելու սրբազան գործին: Եզրակացնելով՝ ընկերը յաջողութիւն եւ լաւ ծրագիրներու մշակում մաղթեց ՀՕՄ-ի Հայաստանի Շրջանային 27-րդ Պատգամաւորական ժողովին:

Ապա ընթացակարգ Շրջանային վարչութիւնը յատուկ մետալով պարգեւատրեց ընկերուհիներ Շուշան Շուշանեանն ու Վեհանոյշ Մարգարեանը, որոնք ՀՕՄ-ի հիմնադրութենէն՝ 1 Յունուար 1991-էն մինչեւ օրս եղած են ՀՕՄ-ի Հայաստանի շրջանի գործունէայ անդամները: Ժողովականները յոտնկայս եւ երկարաշունչ ծափոջոյններով ընկալեցին գոյգ ընկերուհիներու պարգեւատրումը:

Պաշտօնական բաժնի աւարտէն ետք, ժողովը գործնական աշխատանքի անցնելով, ընտրեց իր առժամեայ դիւանն ու իրաւասութիւնները ճշորդ յանձնախումբը: Ժողովի օրինականութիւնը հաստատուելէ ետք, ժողովը անցաւ բնականոն աշխատանքի:

Համեստ Սասունեան կարդաց ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան գոր-

ծունէութեան ամփոփ տեղեկագիրը, որուն յաջորդեց ՀՕՄ-ի Հայաստանի Շրջանային վարչութեան քառամեայ նիւթաբարոյական տեղեկագիրներու ընթերցումները: Այնուհետեւ ժողովականներուն առիթ տրուեցաւ ներկայացնելու իրենց լուսաբանական հարցումները, նախ քառամեայ գործունէութեան բարոյական եւ ապա նիւթական տեղեկագիրներու մասին, որոնց Շրջանային վարչութեան անդամները հերթաբար պատասխանեցին: Չոյգ տեղեկագիրներու մասին բաւարարող պատասխաններ ստանալէ ետք, տեղի ունեցաւ ակնարկուած գործունէութեանը ըստ էութեան քննարկումը: Բոլոր ելոյթ ունեցողներն ալ բարձր գնահատեցին ընթացակարգ Շրջանային վարչութեան քառամեայ գործունէութիւնը, յատկապէս՝ հայոց բանակի, վիճակագրական կենտրոնի, ընտանիքներու, կարօտեալ անհատներու եւ ընտանիքներու յատկացում լիութեան եւ բարոյական օգնութիւնները, ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան որբախնամ, ուսանող եւ այլ մարդասիրական ծրագիրներու մասնակցութիւնն ու նախաձեռնած օգտակար աշխատանքները:


Կիրակի, 26 Յունիս 2022-ի առաւօտեան նիստին ժողովականներուն առիթ տրուեցաւ ներկայացնելու իրենց առաջարկները, որոնք բանաձեւի յանձնախումբին կողմէ խմբագրուելէ ետք, մէկ առ մէկ ներկայացուցան ժողովականներուն, լուսաբանուեցան եւ թեր ու դեմ կարծիքներու արտայայտութիւններէ ետք իբրեւ որոշում որդեգրուեցան ժողովին կողմէ: Վաւերացուած բանաձեւերը գլխաւորաբար կը վերաբերէին ՀՕՄ-ի կազմակերպչական, դաստիարակչական, հայրենիքի ու ՀՕՄ-ի բարգաւաճման եւ զարգացման, մասնաճիւղերու աշխուժացման նպատակով աշխատանքներուն:

ՀՕՄ-ի յառաջիկայ երկամեակի նախահաշիւի վաւերացումէն ետք տեղի ունեցաւ Շրջանային վարչութեան անդամներու եւ փոխանդամներու ընտրութիւնը: Կարեւոր այս օրակարգի իրականացումէն ետք տեղի ունեցաւ հաշուեքննիչ յանձնախումբի ընտրութիւնը: Ժողովը վերջ գտաւ կէսօրէ ետք ժամը 3:00-ին, որմէ ետք նորընտիր Շրջանային վարչութիւնը գումարեց իր անդրանիկ նիստը, որուն ընթացքին ընտրեց իր դիւանը: Այնուհետեւ, ժողովականները համախմբուեցան «Ժագօ» ճաշարանը, ուր ուրախ մթնոլորտի մը մէջ ճաշ-խրախճանք մը ունեցան, «Ժողովուրդիս հետ, ժողովուրդիս համար» ՀՕՄ-ի կարգախօսով վերանորոգեցին իրենց ուխտը՝ միշտ ծառայելու հայ ազգին ու հայրենիքին:

ՀՕՄ-ի Հայաստանի շրջանի նորընտիր Շրջանային վարչութեան անդամ են՝ Շաղիկ Մարութեան (ատենապետ), Սիլվա Իւզպաշեան (փոխատենապետ), Մարո Զեչիշեան (ատենադպիր), Կարինէ Դադայեան (գանձապահ), խորհրդականներ՝ Չոյա Զոչարեան (Հրազդան), Սօսի Գասարեան (Երեւան), Ալիսիա Բեչանեան (Երեւան), Արուս Միրզոյեան (Սիւնիք), Ռուզան Նահապետեան (Սեւան), Լուսինէ Մուրոյեան (Արթիկ) եւ Վեհանոյշ Մարգարեան (Երեւան):

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Հանգուցեալ Բարշ. ԱՄՅՅԻ ՍՐԿ. ՉԱԳՐԵԱՆ



Հանգուցեալի մահուան Բ. տարելիցի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 17 Յուլիս 2022-ին, յաւարտ Ս. եւ Ամմահ Պատարագի, Ս. Աստուածածին եկեղեցույ մէջ, Վիլլաներ-Հալէպ:

«ԳԱՆՁԱՍԱՐ»
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՄ

Խմբագիր՝ Չարմիկ Զիլվաբեան-Պողիկեան
Սրբագրիչներ՝ Նուշիկ Սողոյեան-Առաքելեան
Վեհան Պարսումեան

Ձեւաւորող՝ Յովսէփ Զալոյլեան
Գրաշար՝ Անի Թովալեան-Սարուխան
Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարեն Պապեան-Աղայեկեան
Կայքէջի պատասխանատու՝ Աւօ Պողոսեան
Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիլվաբեան
Հաշուապահ՝ Յովիկ Պարսումեան

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը Երկուշաբթի օրերը:
- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:
- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:
- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:
- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»-ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով:

ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



ԽՈՅ

Ամրան արձակուրդը պատեհ առիթ է բարելավելու ձեր ընկերային յարաբերությունները: Աշխատեցե՛ք այս ուղղությամբ:



ՑՈՒԼ

Ձեր աշխատանքին առնչուող նոր ծրագիրներ մշակեցե՛ք, որպեսզի գերազանցեք ձեր մրցակիցները:



ԵՐԿՈՒՐԵԱԿ

Չրոյցներ կազմակերպեցե՛ք ձեր գործընկերներուն հետ, ըմբռնելու անոնց մտածելակերպը եւ լսելու տարբեր կարծիքներ:



ԽԵՑՊԵՏԻՆ

Որոշ հեռախոսային պահեցե՛ք նոյնիսկ մտերիմ բարեկամներէն եւ ձեր բոլոր անձնական գաղտնիքները մի՛ պարզեք անոնց:



ԱՌԻԾ

Ձեր յաջողություններուն մասին մի՛ խօսիք ձախող անձերու մօտ: Կրնաք անոնց նախանձը հրահրել ու ձեր յարաբերությունները վատթարացնել:



ԿՈՅՍ

Արուեստի ձեր հակումները պիտի արդիւնաւորուին, եթէ մշակութասեր միջավայրի ու արուեստագետներու հետ գործակցիք:



ԿՇԻՈՔ

Քննադատ եք, սակայն ձեր միջավայրը հաշտ աչքով չի դիտեր նոյնիսկ կառուցողական քննադատությունը: Ուստի՝ ճկունութեամբ քննադատեցե՛ք յոռի երեւոյթները՝ գանոնք սրբագրելու միտումով:



ԿԱՐԻՃ

Մարդոց եսասիրութիւնը կը խրտչեցնէ ու հեռու կը պահէ ձեզ ընկերային կեանքէն: Իտեալական յարաբերություններ չկան: Պատրաստ եղե՛ք ընդունելու մարդիկ՝ ինչպէս որ են:



ԱՂԵՂԱՊՐ

Այլոց կարծիքով մի՛ կողմնորոշուիք: Առաւելաբար ձեր ներքին ձայնին ականջ տուե՛ք:



ԱՅՏԵՂՋԻՐ

Սիրային յարաբերություններուն մէջ հարկ է ըլլալ անկեղծ ու արտայայտուիլ առանց ընկրկելու: Այլապէս առիթները կը կորսուին առյաւել:




ԾՈՎԱԼՈՅԸ

Խուսափեցե՛ք յաճախ մարդոց օգնութեան դիմելէ: Վստահեցե՛ք ձեր ուժին, նոյնիսկ եթէ անհրաժեշտ փորձառութիւնը չունիք որոշ մարգերու մէջ:



ՁՈՒԿ

Ինքնագովութիւնը բացասական անդրադարձ կ'ունենայ յաճախ: Դուք ձեզ գովելու փոխարէն գործեցե՛ք ու թոյլ տուե՛ք, որ ուրիշը ձեզ գովէ ու գնահատէ:



Սուլա Տէր Պողոսեան-Տարաքճեան

ՆՈՐԱՃԵՒՈՒԹԻՒՆ - 2022



Նորաձեւութիւնը այս շրջանին վառ գոյներով եւ այլազան կտորներու առատութեամբ յատկանշուած է: Այս բոլորին համադրումով կարելի է ոճային շքեղ կերպար մը ստանալ:

Ա) Վառ գոյներ

2022-ի գլխաւոր նորոյթներն են. - վառ մանիշակագոյնը, նարնջագոյնն ու վառ դեղինը: Իսկ փայլիկներ կամ բայթե կտորները այս եղանակի շողշողուն տարրերն են: Արդիական են կարմիր-կանաչ փայլիկներով հագուստները, իսկ նուրբ վարդագոյնն ու կապոյտը այժմառու կը համարուին երեկոյեան տաքատ-շապիկներու կամ ամենօրեայ կիսաշրջագգեստներու համար:

Բ) Երկար տաբատներ

Խորքին մէջ դժուար է պատկերացնել պահարան մը առանց ոճային տաբատի: Չանսագան գոյներով եւ ձեւերով լայն ու երկար տաբատները այս եղանակի ամենէն շատ պահանջուածներն են:

Գ) Ցած գօտի.

Ցած գօտիով տաբատները մոռցուած կը թուէին ըլլալ, սակայն 2022 -ի այս շրջանի վերջին նորոյթը ցած գօտիներով տաբատներն ու ճիւղերն են:

Դ) Սպիտակ գգեստ

Դասական տարբերակ մըն է, որ յատկապէս նորոյթ կը համարուի ամրան այս եղանակին: Թեթեւ, ճերմակ շրջագգեստները իգական սեռին կանաչգիւլութիւն կը հաղորդեն:

Ե) Թափանցիկ կտորներ

2022-ի նորաձեւութեան մէջ մեծ տեղ կը գրաւեն թափանցիկ կտորները:

Չ) Կրունկներ

Այս տարի տարածուած են բարձր կրունկներով կօշիկները եւ ամառնային բաց մուճակները:

Է) Ուսի թելոց

Ուսի թելոցը կամ bicep bracelet -ը նոյնպէս 2000-ական թուականէն կը վերադառնայ այս տարի ու նորաձեւ գարդեղէն կը համարուի: Կրնաք կրել գայն ձեր թելին վրայ:


Ը) Կերպասներ

Այս տարի տարածուած է սողուններու մաշկը, մանուաւնդ եթէ բնական է: 2022-ի նորաձեւութեան միտումները կը ներառեն նաեւ թափանցիկ կօշիկներ: Անոնք շատ յարմարաւետ են, որովհետեւ կը համադրուին այլազան հագուստներու հետ:

Քառակուսի կօշիկները 2022-ին չեն կորսնցներ իրենց արդիականութիւնը. քառակուսի կօշիկներու կամ մուճակներու մէջ ինսամուած ոտնաթաթերը գեղեցիկ տեսք կ'ունենան:

ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՂԱՅԻՆ ԱՌԱՏՆԵՐ

- Գայլէն վախցողը ոչխար չի՛ պահեր:
- Գետը չհասած՝ մի՛ բոպիկնար:
- Գիրկդ նստած մօրուքդ կը փետտէ:
- Գործածուած բանալին փայլուն կ'ըլլայ:
- Գործը՝ կատարելով, ճամբան՝ քալելով:
- Գնա՛ մեռի՛ր, եկո՛ւր սիրեմ:
- Գող՝ սիրտը դո՛ղ:





Ռաֆֆի Սիլահեան

ՍՈՒՐԻԱԿԱՆ

ԱՐԵՄՏԵԱՆ ԱՍԻՈՅ ԱԹԼԵԹԻՉՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒ 2-ՐԴ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ. ՍՈՒՐԻԱ ԳՐԱԻՅՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՍԱՌՈՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԴԻՐԸ

Լիբանանի Աթլետիկ մի Դաշնության կազմակերպությամբ, Ժամհուր վարժարանի մարզադաշտին վրայ տեղի ունեցած Արեւմտեան Ասիոյ տղոց եւ աղջկանց երիտասարդներու 2-րդ ախոյեանութիւնը (20 տարեկանէն վար), որ համախմբեց 9 երկիրներու երկսեռ մարզիկները, պակասեցաւ շատ մեծ յաջողութեամբ:

Ախոյեանութիւնը տեղի ունեցաւ հանրապետութեան Լախազահ գօր. Միշել Աուսի հովանաւորութեամբ:

Տիրանալով 9 ոսկի, 7 արծաթ եւ 5 պրոնզ մետալի, Սուրիա գրաւեց ընդհանուր դասարման առաջին դիրքը:

Զարթար հանդիսացաւ երկրորդ (8 ոսկի, 6 արծաթ եւ 5 պրոնզ), մինչ երրորդ հանդիսացաւ՝ Իրաք (7 ոսկի, 12 արծաթ եւ 6 պրոնզ):

Հիւրընկալ երկիրը՝ Լիբանան, որ առաջին ախոյեանութեան հանդիսացած էր առաջին, այս անգամ հանդիսացաւ 5-րդ (6 ոսկի, 4 արծաթ եւ 10 պրոնզ):

Լիբանանի աթլետիկ մի ֆետերասիոնին անդամները, ախոյեանութեան աւարտին իրենց գոհունակութիւնը յայտնեցին անոր բացառիկ կազմակերպման համար եւ շնորհակալութիւն յայտնեցին, անոր յաջողութեան մէջ իրենց գործօն դերը ունեցած անձերուն:



ՀԱՅԿԱԿԱՆ

ՀԵՆՐԻԿ ՄԵԻԹԱՐԵԱՆ ԵՐԿՐՊԱԳՈՒՆԵՐՈՒՆ ԿԸ ՍՈՐՎԵՑՆԷ ԱՐՏԱՍԱՆԵԼ ԻՐ ՄԱԿԱՆՈՒՆԸ ԵՒ ԿԸ ԾԱՆՕԹԱՅՆԷ ԶԻՐԵՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՍԱՐԺԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՆ

«Ինթըր»-ի տղեկ, Հայաստանի ազգային ընտրանիի նախկին աւագ Հենրիկ Միթարեան հանդէս եկած է տեսահոլովակի մը մէջ, ուր ան իր երկրպագուներուն կը սորվեցնէ արտասանել իր ազգանունը: Տեսանիւթին մէջ Միթարեան կը ներառէ նաեւ տեսարժան վայրեր Հայաստանէն՝ քաջալերելու գրասաշրջութիւնն ու ծանօթացնելու Հայաստանը:



Յիշեցնենք, որ Հենրիկ Միթարեան 2019 թուականէն ի վեր կը խաղար Դոմի «Ռոմա» ակումբին մէջ: Ռոմայի կազմին հետ ան մասնակցած է 115 հանդիպումի, արձանագրած՝ 29 կոլ եւ կատարած 25 արդիւնաւետ փոխանցում: Պայմանագրութեան աւարտին հետեւանքով ան տեղափոխուած է «Ինթըր»:

ՊԱՍԵԹՊՈՒԼԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ Մ16 ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ ՀԱՄԱԵՎԿԱՆԸ ՄԵԿԱԿԸ Է ԶՈՍՈՎՈ

Հայաստանի մինչեւ 16 տարեկան պատանիներու հաւաքականը 12-17 Յուլիս Զոսովոյի Փրիզրէն քաղաքին մէջ կը մասնակցի Եւրոպայի առաջնութեան Գ. բաժանմունքի Բ. ենթախումբի հանդիպումներուն:



Ենթախումբին մէջ Հայաստանի հաւաքականի մրցակիցները պիտի ըլլան Ճիպրալթարի, Անտորրայի եւ Մոլտովայի խումբերը:

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 398)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2		■			■	■	■		■	■		
3					■	■	■				■	
4							■	■				
5								■	■	■		
6									■	■		
7		■		■							■	
8		■				■	■					
9			■							■		
10					■	■						
11	■			■			■	■			■	
12												

Հորիզոնական

- Ժողովրդային ասացուածքը կ'ըսէ. «..... ծովու ջուրին պէս է, որքան կը խմես, այնքան կը ծարաւնաս»:
- Ձայնաւոր տառեր: ԴԷ՛հ:
- Ոտանաւորի տողերուն նմանահնչիւն վերջաւորութիւնը, որ կը կըրկնուի երկու կամ աւելի անգամներ: Աշխարհահռչակ երաժիշտ:
- Հակառակ՝ հաստատական պատասխան: Առարկայ: Հակառակ՝ Աշոտ Բ. թագաւորին անուանումը:
- Հակառակ՝ որկրամոլ:
- Ստոյգ, իրական: Էական բայ:
- Յագեալ:
- Կրկնուած ձայնաւորներ: Տօթ:
- Տառի մը անունը: Հակառակ՝ սարսափիլ: Հակառակ՝ տարածքի միւտար:
- Վայրկեան: Որմածերպ:
- Եւս: Տառի մը անունը:
- Հետեւեալ խօսքին հեղինակը. «Չկա՛յ աւելի գարիւրելի բան, քան անկատակ գոյութիւնը»:

Ուղղահայեաց

- Սիւսանթոյի երկերէն:
- Օդ: Հակառակ՝ ժխտական պատասխան:
- Աստուածային: Մշակութային արժեքներէն մէկը:
- Խրոխտ: Աղբիւր: Հակառակ՝ արական անուն:
- Երոպական երկիր: Տառի մը հարեանները:
- Երնէ՛կ: Լեցուն:
- Կրկնուած բաղաձայններ:
- Աչքի վարագոյր: Անգօր:
- Ամենէն առաջ: Հմուտ:
- Փոքրացնող մասնիկ: Հակառակ՝ Կոմիտասի երգերէն «..... Եաման»: Հակառակ՝ առջեւ:
- Ճափոնական թատրոն: Արական անուն:
- Ներսիկ Իսախրեանի երգերէն: Պատշաճ:

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 397)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	Գ	Ե	Դ	Ժ	Ն	Ս	Լ	Ե	Դ	Ե	Դ	Ե
2	Ա	Ի	Ե	Պ	Ն	Ե	Մ	Դ	Ե	Դ	Ե	Դ
3	Ա	Ս	Կ	Ե	Ն	Ս	Ր	Ս	Մ	Դ	Ե	Դ
4	Ռ											
5	Լ											
6	Մ	Կ	Դ	Ն	Լ	Ռ	Ե	Դ	Ե	Դ	Ե	Դ
7	Ս	Ս	Ե	Կ	Լ	Ս	Փ	Ե	Դ	Ե	Դ	Ե
8	Ս	Մ	Ս	Ն	Կ	Լ	Ս	Փ	Ե	Դ	Ե	Դ
9	Ս	Կ	Դ	Ն	Լ	Ս	Փ	Ե	Դ	Ե	Դ	Ե
10	Ս	Կ	Դ	Ն	Լ	Ս	Փ	Ե	Դ	Ե	Դ	Ե
11	Մ	Կ	Դ	Ն	Լ	Ս	Փ	Ե	Դ	Ե	Դ	Ե
12	Ր	Ս	Կ	Դ	Ն	Լ	Ս	Փ	Ե	Դ	Ե	Դ

ԼՈՒԾՈՒՄ

ԵՐԿՐԵՐԵՐԹԻ 18/7



24° 39°

ԵՐԵՐԵՐԵՐԹԻ 19/7



24° 40°

ՉՈՐԵՐԵՐԵՐԹԻ 20/7



24° 40°

ՀԻՆԱՐԵՐԹԻ 21/7



23° 40°

ՈՐԲԱՐԹ 22/7



23° 39°

ՇԱՐԱՐԹ 23/7



23° 39°

ԿԻՐԱԿԻ 24/7



22° 39°

